



Abel Aganbegyan  
Gorbachev in sağı kolu



**Gorbachev'in Ekonomi Başdanışmanı Aganbegyan  
Azerbaycan'dan toprak istedi**

# Ermeni istahı kabarıyor...

Sedat ERGİN, bildiriyor

Թրքական տարածուն (աւելի քան 800 հազար տոպաքանակ) օրաթերթը, իր 26 դեկտ. 1987-ի թիւին մէջ, «ՀԱՅՈՑ ԱԽՈՐԺԱԿՆԵՐԸ ԿԸ ԳՐԳՈՒՈՒՄԻՆ» խորագիրը կրող գրութեամբ մը կ'անդրադառնայ Սովետական Միութեան գլխաւոր տնտեսագետ Փրոֆ. Աբէլ Աղանբէկեանի կարգ մը յայտարարութիւններուն՝ Ղարաբաղ ու Նախիջեանը Հայաստանին վերամիացնելու ուղղութեամբ: Թերթը տպած է նաեւ Աղանբէկեանի լուսակարը եւ յարմարեցուցած է քարտէս մը, ցոյց տալով, թէ Հայերը ի՞նչ «հողեր կը պահանջեն Ատրպէյճանէն»: ԼԻԻՐԻԻԷԹ Աբէլ Աղանբէկեանը կը նկատէ Կորպաչովի «աջ բազուկը» եւ տնտեսական հարցերու խորհրդականը:

Ճիշդ է, Աղանբէկեան Կորպաչովի աջ բազուկն է եւ տնտեսական հարցերու խորհրդատուն: Սակայն, ԼԻԻՐԻԻԷԹ ի թղթակիցը՝ Սետաթ Էրկին Ղարաբաղի ու Նախիջեանի Հայաստանին վերամիացնելու աշխատանքները կը ներկայացնէ գլխիվայր ու զրգոյշ հնարքներով: Սետաթ Էրկինի համար հիմնականը «Ատրպէյճանէն Հայոց հող պահանջելն» է եւ ոչ թէ անցեալի սխալի մը հետեանքը սրբազրել կամ հարցի ճիշդ լուսարանութիւնը:

Ըստ Թրքական վերոյիշեալ թերթի զրգոյշ լրատութեան, իբր, Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու տարուած աշխատանքներուն հետեանքով, հայերու եւ ատրպէյճանցի թուրքերու միջեւ բախում առաջացած է: «Ատրպէյճան» կամ «ատրպէյճանցի» յիշատակելու ժամանակ, Սետաթ Էրկին անպայման անոնց կը կոչ թՈՒՐԸ անունը, որպէսզի ընդգծէ թուրքերոյ այսպէս կոչուած հոգեկցութիւնը, ատրպէյճանցիներու նկատմամբ:

ԼԻԻՐԻԻԷԹ միեւնոյն գրութեան մէջ կ'անդրադառնայ նաեւ Կորպաչովի վաշինկաթըն այցելութեան օրերուն, հայ համայնքի որոշ նախաձեռնութիւններուն: Թուրք թերթը կ'ընդգծէ, թէ ամերիկահայ մամուլը, ինչպէս նաեւ Մացեալ նահանգներու Արեւելեան թեմի Առաջնորդ թորգոմ Արք. Մանուկեան նամակներով զիմած են Կորպաչովին, Ղարաբաղը ու Նախիջեանը Հայաստանին կցելու առաջարկութեամբ:

Եարունակելով իր գրութիւնը, ԼԻԻՐԻԻԷԹ կը տեղեկացնէ, թէ Լոտտոնի մէջ, Աբէլ Աղանբէկեան ընդունելութեան մը ընթացքին յայտարարած է, թէ Ղարաբաղը Հայաստանին կցելու հարցը պիտի ստանայ իր լուծումը, հիմք ունենալով տնտեսական մտահոգութիւններ: Թերթը կուտայ նաեւ Աբէլ Աղանբէկեանի հակիրճ կենսագրութիւնը:

Հայոց «ախորժակը զրգուած» տեսնելով, ԼԻԻՐԻԻԷԹ ի բուն մտահոգութիւնը, անկասկած, Ղարաբաղի կամ Նախիջեանի մասին չէ: Հարցը շատ աւելի խոր է եւ կապ ունի Հայկական պահանջատիրութեան հետ, պահանջատիրութիւն, որ իր սլաքները ուղղած է դէպի բռնագրաւիչ Թուրքիան:

Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու հարցը, Սովետական Միութեան սահմաններուն մէջ, առանց էական ցնցումներու երկու հարեան ժողովուրդներու փոխադարձ հասկացութեամբ, վերջապէս կրնայ լուծուիլ:

Թէ ինչպէս վաճար, Կարսը, Արտահանը եւ Հայկական միւս բռնագրաւեալ հողերը պիտի ազատագրուին Թուրքիայէն, այս է խնդիրը...: